

**Մաքսային միությունում տեխնիկական կանոնակարգման մասին**

Մաքսային միության հանձնաժողովը **որոշեց**.

1. Հաստատել՝

- «Սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)՝ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառման, ինչպես նաեւ դրա ձեւավորման ու վարման կարգի մասին» հիմնադրույթը (Հավելված թիվ 1),

- «Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ձեւավորման ու վարման կարգի մասին» հիմնադրույթը (Հավելված թիվ 2) ,

- Համապատասխանության սերտիֆիկատի եւ համապատասխանության հայտարարագրի միասնական ձեւերը (Հավելված թիվ 3),

- «Մաքսային միության մաքսային տարածք համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի (ապրանքների) ներմուծման կարգի մասին» հիմնադրույթը (Հավելված թիվ 4),

- «Տեխնիկական կանոնակարգման, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական միջոցառումների կիրառման գծով համակարգող կոմիտեի մասին» հիմնադրույթը (Հավելված թիվ 5),

- Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման)

ենթակա արտադրանքի միասնական ցանկը (այսուհետ՝ Արտադրանքի միասնական ցանկ) (Հավելված թիվ 6):

2. Հանձնարարել Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինն Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների հետ համատեղ նախապատրաստել հրապարակման Արտադրանքի միասնական ցանկը, որը ներառում է Մաքսային միության անդամ պետությունների միջպետական եւ ազգային (պետական) ստանդարտների շարքից վերոնշյալ արտադրանքի նկատմամբ միասնական պարտադիր պահանջներ սահմանող նորմատիվ փաստաթղթերի ցանկը:

3. Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությանը, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմիններին՝ մինչեւ 2010 թվականի հունիսի 30-ն ընկած ժամկետում հրապարակել Արտադրանքի միասնական ցանկը՝ հաշվի առնելով սույն Որոշման 2-րդ կետը:

4. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարություններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից կիրառել համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի ցանկերը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն (այսուհետ՝ ազգային ցանկեր), եւ Արտադրանքի միասնական ցանկը՝ սույն Որոշմանը կից թիվ 6 հավելվածին համապատասխան:

5. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից ապահովել

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրի ազգային մասերի ձեւավորումն ու վարումը՝ սույն Որոշմանը կից թիվ 1 հավելվածին համապատասխան.

Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ազգային մասերի ձեւավորումն ու վարումը, ինչպես նաեւ դրանց օպերատիվ տեղադրումն իրենց պաշտոնական կայքերում դրանց հասանելիության ապահովմամբ՝ սույն Որոշմանը կից թիվ 2 հավելվածին համապատասխան.

Միասնական ձեռով պատրաստված համապատասխանության սերտիֆիկատների տրամադրումը՝ սույն Որոշմանը կից թիվ 3 հավելվածին համապատասխան.

Արտադրանքի միասնական ցանկում ներառված արտադրանքի համապատասխանության հայտարարագրերի սերտիֆիկացման եւ գրանցման գծով աշխատանքների կազմակերպումը՝ սույն Որոշմանը կից թիվ 3 հավելվածին համապատասխան:

6. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային վարչարարության ոլորտում լիազորված մարմիններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից Արտադրանքի միասնական ցանկում եւ ազգային ցանկերում ներառված արտադրանքի (ապրանքների) մաքսային հսկողություն իրականացնելիս առաջնորդվել սույն Որոշմանը կից թիվ 4 հավելվածով:

7. Կողմերին՝ մինչեւ 2010 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամկետում նախապատրաստել 2011 թվականի հունվարի 1-ից ազգային ցանկերի արտադրանքի անվանացանկերի միասնականացման վերաբերյալ առաջարկություններ՝ հաշվի առնելով՝

- պարտադիր սերտիֆիկացման կիրառումը միայն այն արտադրանքի նկատմամբ, որի շրջանառությունը կապված է քաղաքացիների կյանքին եւ առողջությանը վնաս հասցնելու բարձր ռիսկի հետ.

- պատրաստի արտադրանքի եւ դրա բաղկացուցիչ մասերի (նյութերի, կոմպլեկտավորող տարրերի եւ հանգույցների) համապատասխանության միաժամանակյա պարտադիր գնահատումը (հավաստումը) չթույլատրելը:

8. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններին՝ մինչեւ 2010 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամկետում նախապատրաստել 2011 թվականի հունվարի 1-ից Արտադրանքի միասնական ցանկում օժանելիքակոսմետիկական եւ սննդային արտադրանք ներառելու մասին առաջարկությունները:

9. Սահմանել, որ՝

- մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ն ընկած ժամկետում Արտադրանքի միասնական ցանկում ներառված արտադրանքի համար հայտատուի ընտրությամբ տրվում են համապատասխանության սերտիֆիկատներ եւ ձեւակերպվում են համապատասխանության հայտարարագրեր՝ միասնական ձեւերով, եւ (կամ) համապատասխանության սերտիֆիկատներ եւ համապատասխանության հայտարարագրեր՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունների համաձայն.

- Մաքսային միության անդամ պետությունների տարածքում չգտնվող արտասահմանյան արտադրողների արտադրանքի համար ձեւակերպվում են համապատասխանության սերտիֆիկատներ կամ համապատասխանության հայտարարագրեր՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն, կամ համապատասխանության սերտիֆիկատներ՝ միասնական ձեւով:

10. Հաստատել, որ Արտադրանքի միասնական ցանկում ներառված արտադրանքի մակնշումն իրականացվում է նշանակման երկրի օրենսդրությանը համապատասխան:

11. Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինն՝ մինչեւ 2010 թվականի հունիսի 25-ն ընկած ժամկետում Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմիններին ներկայացնել սույն Որոշմանը կից 3-րդ հավելվածին համապատասխան միասնական ձեւով տրվող՝ Մաքսային միության

անդամ պետությունների կողմից համաձայնեցված սերտիֆիկատի ձեւաթղթի մակետը՝ Մաքսային միության անդամ պետություններում դրա հետագա պատրաստման համար:

## 12. Կողմերին՝

12.1. Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարության հետ համատեղ մինչեւ 2010 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամկետում մշակել եւ ներկայացնել Հանձնաժողովի քննարկմանը Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցման հիմնական սկզբունքները պատասխանատվության այն միջոցների մասով, որոնք կիրառվում են իրավաբանական եւ ֆիզիկական անձանց նկատմամբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջների եւ տեխնիկական կանոնակարգման ոլորտում Մաքսային միության օրենսդրության խախտման, այդ թվում նաեւ ոչ հավաստի (չհիմնավորված) հայտարարագրման համար.

նախապատրաստել Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրություններում մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը փոփոխություններ կատարելու առաջարկություններ՝ Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած նշված սկզբունքներին համապատասխան.

12.2. մինչեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամկետում նախապատրաստել հետեւյալ առաջարկությունները՝

– 2011 թվականի հունվարի 1-ից համապատասխանության հայտարարագրի ներկայացման ծանուցողական (իրազեկման) կարգին անցնելու վերաբերյալ, այդ թվում՝ Մաքսային միության անդամ պետությունների՝ տեխնիկական կանոնակարգման ոլորտում լիազորված մարմիններ դրա՝ էլեկտրոնային ձեւով ներկայացման հնարավորության ապահովմամբ.

– համապատասխանության հավաստման ոլորտում Մաքսային միության օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ՝ հաշվի առնելով Եվրոպական միության պրակտիկան պարտադիր սերտիֆիկացումից համապատասխանության հայտարարագրմանն անցնելու մասով:

13. Կողմերին՝ մինչև 2010 թվականի հունիսի 25-ն ընկած ժամկետում Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն ներկայացնել սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ցանկը՝ սույն Որոշմանը կից թիվ 1 հավելվածին համապատասխան՝ մյուս երկու Կողմերին ընդունված որոշման մասին ծանուցմամբ:

14. Խնդրել Կողմերին քննարկել Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման եւ վերացման կարգի նախագիծը եւ մինչև 2010 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամկետում ներկայացնել Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն (Հավելված թիվ 7):

15. Սույն Որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

### **Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝**

<b>Բելառուսի Հանրապետությունից</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից</b>
--	---	-------------------------------------

**Ա. Կոբյակով**

**Ու. Շուկեւ**

**Ի. Շուվալով**

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի  
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 319  
որոշմամբ

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

**Սերտիֆիկացման մարմինները եւ փորձարկման լաբորատորիաները  
(կենտրոնները) Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ  
փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում  
ներառման, ինչպես նաեւ դրա ձեւավորման ու վարման կարգի մասին**

1. «Սերտիֆիկացման մարմինները եւ փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները) Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառման, ինչպես նաեւ դրա ձեւավորման ու վարման կարգի մասին» հիմնադրույթը մշակվել է ԵվրԱզԷսի Միջպետական խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 27 որոշման հիման վրա՝ «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի դրույթները կատարելու նպատակով:

Սույն Հիմնադրույթով սահմանվում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր)՝ սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման) մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմիններ եւ լաբորատորիաներ) ներառման չափանիշները, ինչպես նաեւ Միասնական ռեեստրի ձեւավորման ու վարման կանոնները՝ Մաքսային միության անդամ պետությունների (այսուհետ՝ Կողմեր) ազգային համակարգերում

հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների մասին տեղեկությունների ներառմամբ:

2. Միասնական ռեեստրը կազմված է ազգային մասերից, որոնց ձեւավորումն ու վարումն ապահովում են Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինները (այսուհետ՝ Կողմերի լիազորված մարմիններ):

Միասնական ռեեստրի ազգային մասերը կազմված են բաժիններից, որոնք ներառում են տեղեկություններ՝

- 1) սերտիֆիկացման մարմինների վերաբերյալ,
- 2) լաբորատորիաների վերաբերյալ:

Կողմերի լիազորված մարմիններն ապահովում են Միասնական ռեեստրի ազգային մասերում պարունակվող տեղեկությունների պահպանումը, համակարգումը, արդիականացումը եւ փոփոխությունը, ինչպես նաեւ չարտոնված մուտքից այդ տեղեկատվության պաշտպանությունը:

3. Միասնական ռեեստրը ձեւավորվում է էլեկտրոնային ձեւով, լիազորված մարմինների ծրագրաապարատային միջոցների բազայի վրա՝ ապահովելով ինտերնետ ցանցում Մաքսային միության պաշտոնական կայքից եւ Կողմերի լիազորված մարմինների պաշտոնական կայքերից ազգային մասեր մուտք գործելու հասանելիություն:

Միասնական ռեեստրը վարելու համար օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս ապահովել տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը, համակարգումը, արդիականացումը, փոփոխությունը եւ պաշտպանությունը, ինչպես նաեւ դրա մուտքի հասանելիությունը ինտերնետ ցանցում Մաքսային միության պաշտոնական կայքից եւ լիազորված մարմինների պաշտոնական կայքերից:

4. Միասնական ռեեստրում սերտիֆիկացման մարմնի եւ լաբորատորիայի ներառումն իրականացվում է Կողմի լիազորված մարմնի կողմից՝ հետեւյալ չափանիշներին համապատասխան՝



#### 4.1. սերտիֆիկացման մարմնի դեպքում՝

4.1.1. սերտիֆիկացման մարմնի գրանցումը որպես իրավաբանական անձ՝ Մաքսային միության անդամ պետության (այսուհետ՝ Կողմ) օրենսդրությանը համապատասխան.

4.1.2. միջազգային ստանդարտների կամ միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցված (նույնական) ազգային չափանիշների պահանջներին համապատասխան տրված՝ գործող հավատարմագրման վկայագրի առկայությունը Կողմի հավատարմագրման ազգային համակարգում.

4.1.3. հավատարմագրման ոլորտում հետեւյալ պահանջներից մեկին կամ մի քանիսին բավարարող հետեւյալ արտադրանքի առկայությունը՝

ա) Կողմերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանք,

բ) Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի միասնական ցանկում ներառված արտադրանք,

գ) արտադրանքի այդ տեսակի նկատմամբ Կողմերի համար միասնական տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանք.

4.1.4. հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ընթացքում այն խախտումների բացակայությունը, որոնք հանգեցրել են պարտադիր պահանջներին չհամապատասխանող արտադրանքը շրջանառության մեջ դնելուն.

4.1.5. ըստ հավատարմագրման ոլորտին համապատասխանող գործունեության ուղղությունների՝ փորձագետ-աուդիտորների (փորձագետների) առկայությունը հաստիքացուցակում, որոնք աշխատում են մեկ սերտիֆիկացման մարմնի կազմում.

4.1.6. միջազգային ստանդարտների կամ միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցված (նույնական) ազգային ստանդարտների պահանջներին համապատասխանության մասով հավատարմագրված սեփական փորձարկման բազայի առկայությունը նախընտրելի է.

#### 4.2. լաբորատորիաների դեպքում՝

4.2.1. որպես իրավաբանական անձ լաբորատորիաների գրանցումը՝ Կողմի օրենսդրությանը համապատասխան.

4.2.2. Կողմի հավատարմագրման ազգային համակարգում գործող հավատարմագրման վկայագրի առկայությունը, որը տրվել է միջազգային ստանդարտների կամ միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցված (նույնական) ազգային չափանիշների պահանջներին համապատասխան.

4.2.3. հավատարմագրման բնագավառում հետեյալ պահանջներից մեկը կամ մի քանիսը բավարարող արտադրանքի առկայությունը՝

ա) Կողմերի օրենսդրությանը եւ Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան՝ համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանք,

բ) Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան՝ սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանք,

գ) Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան՝ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանք,

դ) Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանք.

4.2.4. հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ընթացքում այն խախտումների բացակայությունը, որոնք հանգեցրել են պարտադիր պահանջներին չհամապատասխանող արտադրանքը շրջանառության մեջ դնելուն.

4.2.5. միջլաբորատոր համեմատական փորձարկումների դրական արդյունքների առկայությունը:

5. Միասնական ռեեստրից սերտիֆիկացման մարմնի եւ լաբորատորիայի դուրսբերումն իրականացվում է Կողմի լիազորված մարմնի կողմից՝

1) սույն Հիմնադրույթի 4-րդ կետում սահմանված չափանիշներից առնվազն մեկին չհամապատասխանելու դեպքում,

2) միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան հավատարմագրման ընթացակարգերի փոխադարձ համեմատական գնահատումների անցկացման բացասական արդյունքների դեպքում,

3) Միասնական ռեեստրում ներառված սերտիֆիկացման մարմնի եւ լաբորատորիայի գործունեության մեջ խախտումների փաստերի առկայության դեպքում,

4) սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների կողմից՝ լիազորված մարմնի ծրագրային ապահովման համար՝ սույն Հիմնադրույթի 6-րդ կետում նշված էլեկտրոնային գրառման տեսքով տեղեկություններ չտրամադրելու կամ ոչ ժամանակին տրամադրելու դեպքում,

5) միջլաբորատոր համեմատական փորձարկումներում մասնակցության բացասական արդյունքների դեպքում:

6. Սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների մասին տեղեկությունները Միասնական ռեեստրի ազգային մասերում մուտքագրվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից էլեկտրոնային գրառման տեսքով, որը պարունակում է՝

1) սերտիֆիկացման մարմնի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, լաբորատորիայի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն, կոնտակտային հեռախոսները, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, սերտիֆիկացման մարմնի կամ լաբորատորիայի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը,

2) հավատարմագրման ոլորտի վերաբերյալ տեղեկություններ, որոնք ներառում են՝

սերտիֆիկացման մարմինների դեպքում՝ արտադրանքի խմբերի անվանումն ու Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերը (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ),

լաբորատորիաների դեպքում՝ արտադրանքի խմբերի անվանումն ու ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ փաստաթղթավորված հավատարմագրման ոլորտի հիման վրա, փորձարկումների տեսակները կամ մեթոդները, հսկվող ցուցանիշները, նորմատիվ իրավական ակտերը եւ (կամ) տեխնիկական նորմատիվ իրավական ակտերը, հսկվող ցուցանիշներն ու հսկման մեթոդները կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերը,

3) հավատարմագրման վկայագրի գրանցման համարը եւ գրանցման ամսաթիվը,

4) հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը,

5) հավատարմագրման ոլորտի ընդլայնման կամ կրճատման վերաբերյալ լիազորված մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, հավատարմագրման ոլորտի փոփոխության մասով նկարագրությունը,

6) տեղեկություններ հավատարմագրման վկայագրի վերաձեւակերպման վերաբերյալ:

7. Սույն Հիմնադրույթի 2-րդ եւ 6-րդ կետերի համաձայն՝ Կողմերի լիազորված մարմինները սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների վերաբերյալ տեղեկություններ են ներկայացնում Մաքսային միության հանձնաժողով՝ հաստատելու համար (Մաքսային միության հանձնաժողովին համապատասխան լիազորություններով օժտելու օրվանից):

8. Սերտիֆիկացման մարմնի կամ լաբորատորիայի՝ Միասնական ռեեստրում ներառելու կամ միասնական ռեեստրից հանելու անհրաժեշտության դեպքում Կողմի

լիազորված մարմինը տեղեկություններ է ներկայացնում Մաքսային միության հանձնաժողով՝ սույն Հիմնադրույթի 7-րդ կետին համապատասխան:

9. Կողմերի լիազորված մարմինները՝ «Միասնական ռեեստրի հաստատման կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի որոշմանը համապատասխան ինտերնետ ցանցում՝ պաշտոնական կայքերում տեղադրում են սերտիֆիկացման մարմինների ու լաբորատորիաների վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները՝

1) սերտիֆիկացման մարմնի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, լաբորատորիայի անվանումը, իրավաբանական կամ փաստացի հասցեն, կոնտակտային հեռախոսները, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, սերտիֆիկացման մարմնի կամ լաբորատորիայի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը,

2) հավատարմագրման ոլորտի նկարագրությունը,

3) հավատարմագրման վկայագրի գրանցման համարը եւ գրանցման ամսաթիվը,

4) հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը,

5) հավատարմագրման ոլորտի ընդլայնման կամ կրճատման վերաբերյալ լիազորված մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, հավատարմագրման ոլորտի փոփոխությունների մասով նկարագրությունը:

10. Սույն Հիմնադրույթի 6-րդ կետում նշված Միասնական ռեեստրում ներառված սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների վերաբերյալ տեղեկություններն արդիականացնելու անհրաժեշտության դեպքում Կողմի լիազորված մարմինը՝ գրավոր ծանուցմամբ, Մաքսային միության հանձնաժողով է ուղարկում սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունների ցանկը:

Կողմի սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների վերաբերյալ արդիականացված տեղեկությունները տեղադրվում են Մաքսային միության եւ

Կողմի լիազորված մարմնի պաշտոնական կայքերում՝ ծանուցումը Մաքսային միության հանձնաժողով ներկայացնելու օրվանից երեք օր լրանալուց հետո:

11. Շահագրգիռ անձանց հարցման հիման վրա միասնական ռեեստրի ազգային մասերում ներառված Կողմերի սերտիֆիկացման մարմինների եւ լաբորատորիաների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն իրականացվում է լիազորված մարմինների կողմից՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

12. Կողմի սերտիֆիկացման մարմնի կամ լաբորատորիայի գործունեության նկատմամբ դժգոհությունների առաջացման դեպքում բողոքները գրավոր ուղարկվում են սերտիֆիկացման մարմինը կամ լաբորատորիան միասնական ռեեստրում ներառած լիազորված մարմին:

13. Բողոքները քննարկվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

14. Կողմի լիազորված մարմնի որոշման բողոքարկումն իրականացվում է Կողմի օրենսդրությանը համապատասխան:

---

**ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ**

**Միասնական ձեռի համաձայն ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգի մասին**

1. «Միասնական ձեռի համաձայն ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգի մասին» հիմնադրույթը մշակվել է ԵվրԱզԷսի միջպետական խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 27 որոշմամբ «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի դրույթները կատարելու նպատակով:

2. Սույն Հիմնադրույթով սահմանվում է Մաքսային միության շրջանակներում միասնական ձեռի համաձայն ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի (այսուհետ՝ Միասնական ռեեստր) ձեւավորման եւ վարման, Միասնական ռեեստրում ներառված ու միասնական ձեռի համաձայն ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի (այսուհետ՝ համապատասխանության սերտիֆիկատներ եւ համապատասխանության հայտարարագրեր), դրանց գործողությունը կասեցնելու, վերականգնելու, երկարաձգելու կամ դադարեցնելու մասին տեղեկությունների (այսուհետ՝ համապատասխանության սերտիֆիկատների

եւ համապատասխանության հայտարարագրերի մասին տեղեկություններ) ներկայացնելու կարգը:

3. Միասնական ռեեստրը կազմված է Միասնական ռեեստրի ազգային մասերից, որոնց ձեւավորումն ու վարումն ապահովում են Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինները (այսուհետ՝ Կողմերի լիազորված մարմիններ):

Միասնական ռեեստրը ձեւավորվում է էլեկտրոնային եղանակով, Կողմերի լիազոր մարմինների ծրագրաապարատային միջոցների բազայի հիման վրա՝ ապահովելով ինտերնետ ցանցում Մաքսային միության պաշտոնական կայքից եւ Կողմերի լիազորված մարմինների պաշտոնական կայքերից ազգային մասեր մուտք գործելու հասանելիությունը:

Միասնական ռեեստրը վարելու համար օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս ապահովել տեղեկությունների հավաքագրումը, պահպանումը, համակարգումը, թարմացումը, փոփոխությունը եւ պաշտպանությունը, ինչպես նաեւ դրանց մուտքի հասանելիությունը համացանցում Մաքսային միության պաշտոնական կայքից եւ Կողմերի լիազոր մարմինների պաշտոնական կայքերից:

4. Միասնական ռեեստրի ազգային մասերը ձեւավորելը եւ վարելը ներառում է Միասնական ռեեստրի ազգային մասերում համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության հայտարարագրերի, դրանց պահպանման, համակարգման, թարմացման եւ փոփոխության մասին տեղեկություններ ընդգրկելը, ինչպես նաեւ Միասնական ռեեստրի ազգային մասերում պարունակվող տեղեկությունների պաշտպանությունը չարտոնված մուտքից:

5. Համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության հայտարարագրերի մասին տեղեկությունները մուտքագրվում են Միասնական ռեեստրի ազգային մասերում Կողմերի լիազոր մարմինների կողմից համապատասխանության սերտիֆիկատի տրման կամ համապատասխանության



հայտարարագրի գրանցման, դրանց գործողության կասեցման, վերականգնման, երկարաձգման կամ դադարեցման մասին որոշման հիման վրա, որն ընդունվում է Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Համապատասխանության սերտիֆիկատների մասին տեղեկությունները Կողմերի լիազոր մարմինների կողմից էլեկտրոնային գրառմամբ մուտքագրվում են Միասնական ռեեստրի ազգային մասերում եւ պարունակում են՝

1) համապատասխանության սերտիֆիկատի գրանցման համարը, գործողության ժամկետը, այն ձեւաթղթի հաշվառման համարը, որի վրա ձեւակերպված է համապատասխանության սերտիֆիկատը,

2) հայտատուի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն,

3) արտադրողի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն,

4) այն սերտիֆիկացման մարմնի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն, որը տվել է համապատասխանության սերտիֆիկատը,

5) սերտիֆիկացման մարմնի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը,

6) փորձագետ-աուդիտորի (փորձագետի) ազգանունը, անունը, հայրանունը,

7) սերտիֆիկացված արտադրանքի մասին տեղեկություններ, որոնք հնարավոր են դարձնում դրա նույնականացումը,

8) Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագիրը (ծածկագրերը) (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ),

9) նորմատիվ իրավական ակտերի եւ (կամ) տեխնիկական նորմատիվ իրավական ակտերի, նորմատիվային փաստաթղթերի (այսուհետ՝ ՆԻԱ) մասին տեղեկություններ, որոնց պահանջներին համապատասխանության մասով կատարվել է սերտիֆիկացումը,

10) հայտատուի կողմից՝ որպես ՆԻԱ պահանջներին արտադրանքի համապատասխանության ապացույց սերտիֆիկացման մարմին ներկայացված

փաստաթղթերի մասին տեղեկություններ, իրականացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մասին տեղեկություններ,

11) համապատասխանության սերտիֆիկատի համապատասխան դիրքում նշված լրացուցիչ տեղեկություններ,

12) համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման, վերականգնման կամ դադարեցման ամսաթիվը եւ պատճառը,

13) համապատասխանության սերտիֆիկատի գործողության երկարաձգման ամսաթիվը, ժամկետը եւ դրա երկարաձգման հիմնավորումը,

14) համապատասխանության սերտիֆիկատի հավելվածի (հավելվածների) մասին տեղեկություններ:

7. Համապատասխանության հայտարարագրերի վերաբերյալ տեղեկությունները էլեկտրոնային գրառմամբ Կողմերի լիազորված մարմինների կողմից մուտքագրվում են Միասնական ռեեստրի ազգային մասերում եւ պարունակում են՝

1) համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը եւ գրանցման ամսաթիվը,

2) հայտատուի (հայտարարատուի) անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն,

3) արտադրողի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն,

4) տեղեկություններ այն արտադրանքի մասին, որի վրա տարածվում է համապատասխանության հայտարարագիրը՝ ստեղծելով տվյալ արտադրանքը նույնականացնելու հնարավորություն,

5) ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը (ծածկագրերը),

6) ՆԻԱ-ի մասին տեղեկություններ, որոնց պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատվում է,

7) տեղեկություններ իրականացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների, կառավարման համակարգի սերտիֆիկատի, ինչպես նաեւ ապացուցողական հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի մասին,

8) համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը,

9) այն սերտիֆիկացման մարմնի անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն, որը գրանցել է համապատասխանության հայտարարագիրը,

10) այն սերտիֆիկացման մարմնի ղեկավարի ազգանունը, անունը եւ հայրանունը, որը գրանցել է համապատասխանության հայտարարագիրը,

11) համապատասխանության հայտարարագրի հավելվածի (հավելվածների) մասին տեղեկությունները:

8. Լիազոր մարմինները համապատասխանության սերտիֆիկատ/ համապատասխանության հայտարարագիրը տալուց/գրանցելուց հետո երեք օրվանից ոչ ուշ ժամկետում իրենց ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում տեղադրում են՝

համապատասխանության սերտիֆիկատի մասին տեղեկություններ, որոնք նշված են սույն Հիմնադրույթի 6-րդ կետի 1-ին (բացի այն ձեւաթղթի հաշվառման համարի մասին տեղեկություններից, որի վրա ձեւակերպված է համապատասխանության սերտիֆիկատը), 2-րդ, 3-րդ, 7-9-րդ, 12-րդ եւ 13-րդ ենթակետերում,

համապատասխանության հայտարարագրի մասին տեղեկություններ, որոնք նշված են սույն Հիմնադրույթի 7-րդ կետի 1-6-րդ, 8-րդ եւ 11-րդ ենթակետերում:

9. Միասնական ռեեստրի ազգային մասերի ձեւավորումը եւ վարումն իրականացվում են այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են կանխել դրանցում ընդգրկված տեղեկությունների չարտոնված հասանելիությունը: Նշված տեղեկությունների կորուստը կանխելու նպատակով լիազոր մարմնի կողմից ձեւավորվում է Միասնական ռեեստրի ազգային մասերի պահուստային պատճենը:

10. Համապատասխանության հայտարարագրի գործողության կասեցման, վերականգնման կամ դադարեցման մասին տեղեկությունները՝ Կողմի պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող մարմնի կարգադրագրի համաձայն, Կողմի լիազոր մարմնի կողմից մուտքագրվում են Միասնական ռեեստրի ազգային մասում՝ այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

11. Շահագրգիռ անձանց հարցման հիման վրա Միասնական ռեեստրի ազգային մասում ընդգրկված համապատասխանության սերտիֆիկատի եւ համապատասխանության հայտարարագրի մասին տեղեկությունների տրամադրումն իրականացնում է Կողմի լիազոր մարմինը:

---

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Մաքսային միության հանձնաժողովի  
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 319  
որոշմամբ

**Համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձև\***

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

(1)

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ**

(2)

Համապատասխանության նշան
----------------------------

(3)

№ ՄՄ \_\_\_\_\_

(4)

Սերիա \_\_\_ № XXXXXXX

(5) ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ

(6) ՀԱՅՏԱՏՈՒ

(7) ԱՐՏԱԴՐՈՂ

(8) ԱՐՏԱԴՐԱՆՔ

(9) ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր

(10) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ

(11) ՍԵՐՏԻՖԻԿԱՏԸ ՏՐՎԱԾ Է \_\_\_\_\_ ՀԻՄԱՆ ՎՐԱ

(12) ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(13)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

ՍԿՍԱԾ ՄԻՆՉԵՎ

(14)

**Կ. Տ.            ղեկավար (լիազորված անձ)՝**

ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը

**Փորձագետ–աուդիտոր (փորձագետ)՝**

ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը

\* Համապատասխանության սերտիֆիկատի ձեւաթղթերին ներկայացվող պահանջները եւ դրան կից հավելվածները, դրանց լրացման կանոնները սահմանված են 1-ին հավելվածում:

**Համապատասխանության հայտարարագրի միասնական ձեւ\*\***

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

Հայտարարատու (1)

Ի դեմս (2)

Հայտարարում է, որ (3)

Համապատասխանում է \_\_\_\_\_ պահանջներին (4)

Համապատասխանության հայտարարագիրն ընդունված է \_\_\_\_\_ հիման վրա (5)

Լրացուցիչ տեղեկություններ (6)

Համապատասխանության հայտարարագիրը վավեր է գրանցման ամսաթվից մինչեւ \_\_\_\_\_ (7)

\_\_\_\_\_ (8)

ստորագրություն

կազմակերպության ղեկավարի (ներա կողմից լիազորված անձի) կամ անհատ ձեռնարկատիրոջ անվան եւ հայրանվան սկզբնատառերը եւ ազգանունը)

**Կ.Տ.**

Համապատասխանության հայտարարագրի գրանցման մասին տվյալներ (9)

Համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը ՄՄ № (10)

Համապատասխանության հայտարարագրի գրանցման ամսաթիվը (11)

\_\_\_\_\_ (12)

ստորագրություն

անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը

սերտիֆիկացման մարմնի ղեկավարի (նրա կողմից լիազորված անձի)

**Կ.Տ.**

\* Համապատասխանության հայտարարագրի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները եւ դրա լրացման կանոնները սահմանված են 2-րդ հավելվածում:



Համապատասխանության  
սերտիֆիկատի միասնական ձեւի

1. Մաքսային միության անդամ պետությունների սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինները (այսուհետ՝ Կողմերի սերտիֆիկացման մարմիններ)<sup>1</sup>, որոնք իրականացնում են Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի սերտիֆիկացումը (այսուհետ՝ Միասնական ցանկ), միասնական ձեւով ձեւակերպում են համապատասխանության սերտիֆիկատները (այսուհետ՝ համապատասխանության սերտիֆիկատներ) եւ դրանց մասին տվյալները փոխանցում են Կողմի լիազոր մարմնին՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված «Միասնական ձեւով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության գրանցված հայտարարագրերի միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

2. Համապատասխանության սերտիֆիկատի ձեւաթղթերին ներկայացվող պահանջները եւ դրանց լրացման կանոնները.

2.1. Համապատասխանության սերտիֆիկատների ձեւաթղթերը եւ համապատասխանության սերտիֆիկատների հավելվածների ձեւաթղթերը (այսուհետ՝ ձեւաթղթեր) հանդիսանում են խիստ հաշվետվության փաստաթղթեր, ունեն առնվազն չորս աստիճանի պաշտպանություն, այդ թվում՝

դրական արտացոլման գիյոշի պատկերի շրջանակ,

---

<sup>1</sup> Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման մարմինները

գիլյոշի պատկերի շրջանակի պարագծով տեղադրված միկրոտեքստ,

կիսաթափանցիկ հոլոգրաֆիկ պաշտպանիչ տարր,

ձեւաթղթի տպագրական համար (սերիայի վերաբերյալ նշում՝ սույն հավելվածի 2.2 կետին համապատասխան) եւ հերթական համար (արաբական յոթ թվանշաններից կազմված թիվ):

2.2. Ձեւաթղթերը պատրաստվում են Մաքսային միության անդամ պետություններում տպագրական եղանակով: Ընդ որում, ձեւաթղթի տպագրական համարը, որը պատրաստվում է Բելառուսի Հանրապետությունում, պարունակում է «Սերիա BY» նշումը, Ղազախստանի Հանրապետությունում՝ «Սերիա KZ» նշումը, Ռուսաստանի Հանրապետությունում՝ «Սերիա RU» նշումը:

2.3. Ձեւաթղթերը լրացվում են բացառապես էլեկտրոնային տպագրական սարքերի օգտագործմամբ: Ձեւաթղթի դիմերեսը լրացվում է ռուսերենով, հակառակ կողմը կարող է լրացվել այն Կողմի պետական լեզվով, որտեղ տրվել է համապատասխանության սերտիֆիկատը՝ Միասնական ձեւում սահմանված վավերապայմաններին (դաշտերին) համապատասխան:

2.4. Վավերապայմանների (դաշտերի) նկարագրությունը.

1-ին դաշտում՝ հետեւյալ հերթականությամբ ուղղահայաց կատարված մակագրությունները՝ «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ»

2-րդ դաշտում՝ համապատասխանության սերտիֆիկատի գրանցման համարը, որը ձեւավորվում է Կողմերի ազգային կանոնների համաձայն՝ պարտադիր կերպով ներառելով «ՄՄ»՝ Մաքսային միության հապավումը, եւ նշելով պետության ծածկագիրը՝ BY – Բելառուս, KZ – Ղազախստան, RU – Ռուսաստան:

3-րդ դաշտում՝ Կողմի սերտիֆիկացման համակարգի համապատասխանության (համապատասխանության հավաստման) նշանը:

4-րդ դաշտում՝ համապատասխանության սերտիֆիկատի ձեւաթղթի հաշվառման (անհատական) համարը, որը կատարվում է ձեւաթուղթը պատրաստելիս:

5-րդ դաշտում՝ համապատասխանության սերտիֆիկատ տրամադրած սերտիֆիկացման մարմնի լրիվ անվանումը, իրավաբանական եւ փաստացի հասցեն (ներառյալ պետության անվանումը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման վկայագրի գրանցման համարը, հավատարմագրման վկայագրի գրանցման ամսաթիվը, հավատարմագրման վկայագիր տրամադրած հավատարմագրման մարմնի անվանումը:

6-րդ դաշտում՝ կախված նրանից, թե ում է տրվել համապատասխանության սերտիֆիկատը՝ նշվում է արտադրողը եւ (կամ) մատակարարը: Այնուհետեւ նշվում է հայտատուի լրիվ անվանումը, որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պետական գրանցման մասին տեղեկությունները, իրավաբանական եւ փաստացի հասցեն (ներառյալ պետության անվանումը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն:

7-րդ դաշտում՝ սերտիֆիկացված արտադրանքի արտադրող կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն (ներառյալ պետության անվանումը), այդ թվում՝ դրա այն մասնաճյուղերի հասցեները, որոնց արտադրանքի վրա տարածվում է համապատասխանության սերտիֆիկատը:

8-րդ դաշտում՝ այն արտադրանքի մասին տեղեկությունները, որոնց համար տրվել է համապատասխանության սերտիֆիկատը՝

- արտադրանքի լրիվ անվանումը,

- արտադրանքի մասին այն տեղեկությունները, որոնք ապահովում են դրա նույնականացումը (արտադրանքի տեսակը, ապրանքանիշը, մոդելը, արտիկուլը եւ այլն),

- այն նորմատիվ իրավական ակտերի եւ (կամ) նորմատիվ տեխնիկական իրավական ակտերի, նորմատիվ փաստաթղթերի (այսուհետ՝ ՆԻԱ) վերաբերյալ նշումը, որոնց համապատասխան արտադրվել է արտադրանքը,

- սերտիֆիկացման օբյեկտի անվանումը (սերիական թողարկումը, խմբաքանակը կամ եզակի արտադրատեսակը): Արտադրանքի սերիական թողարկման դեպքում կատարվում է «սերիական թողարկում» գրառումը: Արտադրանքի խմբաքանակի դեպքում նշվում է խմբաքանակի չափը, եզակի արտադրանքի դեպքում՝ արտադրանքի գործարանային համարը, երկու դեպքում էլ լրացուցիչ ներկայացվում են ապրանքաուղեկից փաստաթղթերի վավերապայմանները:

9-րդ դաշտում՝ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագիրը (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ):

10-րդ դաշտում՝ ՆԻԱ-ի վերաբերյալ նշումը՝ այն բաժինների (կետերի, ենթակետերի) մատնանշմամբ, որոնց պահանջներին համապատասխանության համար իրականացվել է սերտիֆիկացումը, եւ որոնք նախատեսված են Միասնական ցանկով:

11-րդ դաշտում՝ այն փաստաթղթերի վերաբերյալ նշումը (անվանումը), որոնց հիման վրա տրվում է համապատասխանության սերտիֆիկատը:

Որպես նման փաստաթղթեր եւ սերտիֆիկացման սխեմայից կախված՝ կարող են օգտագործվել՝

- Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ արտադրանքի սերտիֆիկացված փորձարկումների արձանագրությունները,

- կառավարման համակարգի սերտիֆիկատը,

- արտադրության վիճակի վերլուծության մասին ակտը,

- Կողմերի օրենսդրությամբ տվյալ արտադրանքի համար նախատեսված ել լիազոր մարմինների ու հաստատությունների կողմից տրված փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, անասնաբուժական սերտիֆիկատ, բուսասանիտարական սերտիֆիկատ, հրդեհային անվտանգության սերտիֆիկատ եւ այլն)՝ մատնանշելով համարը, տրման ամսաթիվը եւ այլն,

- պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստող այլ փաստաթղթերը:

ՆԻԱ-ի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է հաստատվեն հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով (անհատ ձեռնարկատիրոջ համար՝ կնիքի առկայության դեպքում):

12-րդ դաշտում՝ արտադրանքի պահպանության պայմաններն ու ժամկետները, պիտանիության ժամկետը, արտադրանքը նույնականացնող այլ տեղեկությունները (տվյալները ներկայացվում են ըստ անհրաժեշտության):

13-րդ դաշտում՝ Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության գրանցված հայտարարագրերի միասնական ռեեստրում համապատասխանության սերտիֆիկատի գրանցման ամսաթիվը (օրը՝ արաբական երկու թվանշաններով, ամիսը՝ արաբական երկու թվանշաններով, տարին՝ արաբական չորս թվանշաններով):

14-րդ դաշտում՝ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը (օրը՝ արաբական երկու թվանշաններով, ամիսը՝ արաբական երկու թվանշաններով, տարին՝ արաբական չորս թվանշաններով):

15-րդ դաշտում՝ սերտիֆիկացման մարմնի կնիքը, սերտիֆիկացման մարմնի ղեկավարի (նրա կողմից լիազորված անձի), փորձագետ-աուդիտորի (փորձագետների) ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը: Չի թույլատրվում ստորագրության փոխարեն ֆաքսիմիլիտի օգտագործումը:

Վերոնշյալ դաշտերում ընդգրկվող տեղեկությունների զգալի ծավալի դեպքում այդպիսի տեղեկությունները կարող են ներկայացվել համապատասխանության սերտիֆիկատի հավելվածում (հավելվածներում): Հավելվածները ձեւակերպվում են համապատասխանության սերտիֆիկատի հավելվածի ձեւաթղթի վրա եւ համապատասխանության սերտիֆիկատի անբաժանելի մասն են կազմում: Հավելվածի յուրաքանչյուր թերթ պետք է պարունակի համապատասխանության սերտիֆիկատի գրանցման համարը, համապատասխանության մարմնի ղեկավարի (նրա կողմից լիազորված անձի) եւ փորձագետ-աուդիտորի (փորձագետի) ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը, տվյալ մարմնի կնիքը: Համապատասխանության սերտիֆիկատի 8-րդ դաշտում անհրաժեշտ է հղում կատարել հավելվածին (հավելվածներին)՝ մատնանշելով համապատասխանության սերտիֆիկատի հավելվածների ձեւաթղթերի հաշվառման համարները:

3. Ձեւաթղթի վավերապայմաններում համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձեւով չնախատեսված հավելյալ գրառումներ, ինչպես նաեւ բառերի կրճատում, տեքստի որեւէ ուղղում չի թույլատրվում:

4. Համապատասխանության սերտիֆիկատների, այդ թվում՝ դրանց կից հավելվածների պատճենները հաստատվում են այն Կողմի օրենսդրության համաձայն, որի տարածքում տրվել է միասնական ձեւով ձեւակերպված համապատասխանության սերտիֆիկատը:

5. Համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձեւը էլեկտրոնային տեսքով տեղադրվում է Մաքսային միության ինտերնետ ցանցի պաշտոնական կայքում, Կողմերի լիազորված մարմինների եւ սերտիֆիկացման մարմինների ինտերնետ ցանցի պաշտոնական կայքերում:

Համապատասխանության հայտարարագրի

միասնական ձեւի

1. Այն արտադրանքի արտադրողը (մատակարարը), որը ենթակա է համապատասխանության հայտարարագրման Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի միասնական ցանկին (այսուհետ՝ Միասնական ցանկ) համապատասխան, համապատասխանության հայտարարագիրը ձեւակերպում է միասնական ձեւով (այսուհետ՝ համապատասխանության հայտարարագիր):

2. Համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման Մաքսային միության անդամ պետությունների (այսուհետ՝ Կողմեր) օրենսդրությամբ սահմանված կանոններին համապատասխան:

Կողմերի սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինները (այսուհետ՝ Կողմերի սերտիֆիկացման մարմիններ)<sup>2</sup>, գրանցում են համապատասխանության հայտարարագրերը եւ դրանց մասին տեղեկությունները փոխանցում Կողմի լիազոր մարմնին՝ «Միասնական ձեւով ձեւակերպված՝ համապատասխանության տրված սերտիֆիկատների եւ համապատասխանության գրանցված հայտարարագրերի միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

3. Համապատասխանության հայտարարագրի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները եւ դրա լրացման կանոնները.

3.1. Համապատասխանության հայտարարագիրը ձեւակերպվում է A4 (210x297 մմ) ձեւաչափի սպիտակ թղթերի վրա:

---

<sup>2</sup> Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման մարմինները

3.2. Համապատասխանության հայտարարագրի ձեռում նախատեսված բոլոր վավերապայմանները պետք է լրացված լինեն:

Համապատասխանության հայտարարագրերը լրացվում են ռուսերենով՝ բացառապես էլեկտրոնային տպագրական սարքերի օգտագործմամբ: Համապատասխանության հայտարարագրի հակառակ կողմը կարող է լրացվել Կողմերից մեկի լեզվով:

Համապատասխանության հայտարարագրի վավերապայմաններում համապատասխանության հայտարարագրի միասնական ձեռով չնախատեսված հավելյալ գրառումներ, ինչպես նաև բառերի կրճատում, տեքստի որեւէ ուղղում չի թույլատրվում:

### 3.3. Վավերապայմանների (դաշտերի) նկարագրությունը.

1-ին դաշտում՝ արտադրողի, մատակարարի լրիվ անվանումը կամ համապատասխանության հայտարարագիրն ընդունած անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը, իրավաբանական եւ փաստացի հասցեն (ներառյալ պետության անվանումը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, նշված սուբյեկտների՝ որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները:

2-րդ դաշտում՝ այն արտադրող, մատակարար կազմակերպության ղեկավարի պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը, որի անունից ընդունվում է համապատասխանության հայտարարագիրը:<sup>3</sup>

3-րդ դաշտում՝ տեղեկություններ այն արտադրանքի վերաբերյալ, որի նկատմամբ ընդունվել է համապատասխանության հայտարարագիր՝

– արտադրանքի լրիվ անվանումը,

– արտադրանքի մասին այն տեղեկությունները, որոնք ապահովում են դրա նույնականացումը (արտադրանքի տեսակը, ապրանքանիշը, մոդելը, արտիկուլը եւ այլն),

---

<sup>3</sup> Անհատ ձեռնարկատիրոջ կողմից համապատասխանության հայտարարագիր ընդունելու դեպքում 2-րդ դաշտը չի լրացվում



- արտադրողի լրիվ անվանումը՝ հասցեի մատնանշմամբ (ներառյալ պետության անվանումը),

- այն նորմատիվ իրավական ակտերի եւ (կամ) նորմատիվ տեխնիկական իրավական ակտերի, նորմատիվ փաստաթղթերի (այսուհետ՝ ՆԻԱ) վերաբերյալ նշումը, որոնց համապատասխան արտադրվել է արտադրանքը,

- Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագիրը (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ),

- հայտարարագրման օբյեկտի տեսակի անվանումը (սերիական թողարկումը, խմբաքանակը կամ եզակի արտադրատեսակը): Արտադրանքի սերիական թողարկման դեպքում կատարվում է «սերիական թողարկում» գրառումը: Արտադրանքի խմբաքանակի դեպքում նշվում է խմբաքանակի չափը, եզակի արտադրանքի դեպքում՝ արտադրանքի գործարանային համարը, երկու դեպքում էլ լրացուցիչ ներկայացվում են ապրանքաուղեկից փաստաթղթերի վավերապայմանները:

4-րդ դաշտում՝ այն ՆԻԱ-ի վերաբերյալ նշումը, որոնց պահանջներին համապատասխանությունը հավաստված է համապատասխանության տվյալ հայտարարագրով (ՆԻԱ-ի բաժինների (կետերի, ենթակետերի) մատնանշմամբ), եւ որոնք նախատեսված են Միասնական ցանկով:

5-րդ դաշտում՝ այն փաստաթղթերի վերաբերյալ նշումը (անվանումը), որոնց հիման վրա ընդունվում է համապատասխանության հայտարարագիրը:

Որպես նման փաստաթղթեր կարող են օգտագործվել՝

- Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ արտադրանքի փորձարկումների արձանագրությունները, որոնք հավաստում են համապատասխանությունը պարտադիր պահանջներին,

- Կողմերի օրենսդրությամբ տվյալ արտադրանքի համար նախատեսված եւ դրա համար լիազորված մարմինների, հաստատությունների եւ կազմակերպությունների կողմից տրված փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, անասնաբուժական սերտիֆիկատ, բուսասանիտարական սերտիֆիկատ, հրդեհային անվտանգության սերտիֆիկատ եւ այլն)՝ մատնանշելով համարը, տրման ամսաթիվը եւ այլն,

- պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստող այլ փաստաթղթերը:

ՆԻԱ-ի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար տրամադրվող փաստաթղթերի պատճենները պետք է հաստատվեն արտադրանքի արտադրողի կամ մատակարարի ստորագրությամբ եւ կնիքով (անհատ ձեռնարկատիրոջ համար՝ կնիքի առկայության դեպքում):

6-րդ դաշտում՝ արտադրանքի պահպանության պայմաններն ու ժամկետները, պիտանիության ժամկետը, արտադրանքը նույնականացնող այլ տեղեկությունները (տվյալները ներկայացվում են ըստ անհրաժեշտության):

7-րդ դաշտում՝ համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը (օրը՝ արաբական երկու թվանշաններով, ամիսը՝ արաբական երկու թվանշաններով, տարին՝ արաբական չորս թվանշաններով):

8-րդ դաշտում՝ արտադրող, մատակարար կազմակերպության կնիքը, այն դեպքում, երբ արտադրողը կամ մատակարարը անհատ ձեռնարկատեր է՝ անհատ ձեռնարկատիրոջ կնիքը (առկայության դեպքում), արտադրող կամ մատակարար կազմակերպության ղեկավարի ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը եւ ազգանունը, այն դեպքում, երբ արտադրողը կամ մատակարարը անհատ ձեռնարկատեր է՝ անհատ ձեռնարկատիրոջ անվան եւ հայրանվան սկզբնատառերը եւ ազգանունը:

Չի թույլատրվում ստորագրության փոխարեն ֆաքսիմիլի եւ օգտագործումը:

9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ դաշտերում՝ համապատասխանության հայտարարագրի գրանցման վերաբերյալ տեղեկություններ, որոնք լրացվում են սերտիֆիկացման մարմնի կողմից:

9-րդ դաշտում՝ համապատասխանության հայտարարագիրը գրանցած սերտիֆիկացման մարմնի լրիվ անվանումը եւ իրավաբանական հասցեն (ներառյալ պետության անվանումը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման վկայագրի գրանցման համարը, հավատարմագրման վկայագրի գրանցման ամսաթիվը, հավատարմագրման վկայագիր տրամադրած հավատարմագրման մարմնի անվանումը:

10-րդ, 11-րդ դաշտերում՝ համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը, որը ձեւավորվում է Կողմերի օրենսդրության համաձայն՝ պարտադիր կերպով ներառելով «ՄՄ»՝ Մաքսային միություն հապավումը, եւ նշելով պետության ծածկագիրը՝ BY – Բելառուս, KZ – Ղազախստան, RU – Ռուսաստան, եւ դրա գրանցման ամսաթիվը (օրը՝ արաբական երկու թվանշաններով, ամիսը՝ արաբական երկու թվանշաններով, տարին՝ արաբական չորս թվանշաններով):

12-րդ դաշտում՝ սերտիֆիկացման մարմնի կնիքը, դրա ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը եւ ազգանունը: Չի թույլատրվում ստորագրության փոխարեն ֆաքսիմիլիտի օգտագործումը:

Վերոնշյալ դաշտերում ընդգրկվող տեղեկությունների զգալի ծավալի դեպքում այդպիսի տեղեկությունները կարող են ներկայացվել համապատասխանության հայտարարագրի հավելվածում (հավելվածներում): Հավելվածը (հավելվածները) համապատասխանության հայտարարագրի անբաժանելի մասն են կազմում, հավելվածի յուրաքանչյուր թերթ պետք է պարունակի համապատասխանության հայտարարագրի գրանցման համարը, սերտիֆիկացման մարմնի ղեկավարի (նրա կողմից լիազորված անձի) ստորագրությունը, անվան եւ հայրանվան սկզբնատառերը, ազգանունը, տվյալ մարմնի կնիքը: Համապատասխանության

հայտարարագրում անհրաժեշտ է հղում կատարել հավելվածին (հավելվածներին)՝ մատնանշելով այն թերթերի թիվը, որոնց վրա ձեւակերպված է տվյալ հավելվածը:

4. Համապատասխանության հայտարարագրերի, այդ թվում՝ դրանց կից հավելվածների պատճենները հաստատվում են այն Կողմի օրենսդրության համաձայն, որի տարածքում գրանցվել է միասնական ձեռով ձեւակերպված համապատասխանության հայտարարագիրը:

5. Համապատասխանության հայտարարագրի միասնական ձեռը էլեկտրոնային տեսքով տեղադրվում է Մաքսային միության ինտերնետ ցանցի պաշտոնական կայքում, Կողմերի լիազոր մարմինների եւ սերտիֆիկացման մարմինների ինտերնետ ցանցի պաշտոնական կայքերում:

---

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի  
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 319  
որոշմամբ

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

#### **Համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի (ապրանքների) Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման կարգի մասին**

1. «Մաքսային միության մաքսային տարածք համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի (ապրանքների) ներմուծման կարգի մասին» հիմնադրույթը մշակվել է ի կատարումն «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հունիսի 6-ի պայմանագրի, «Տեխնիկական կանոնակարգման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի, «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի:

2. Արտադրանքի (ապրանքների) մաքսային հայտարարագիր ներկայացնելը պետք է ուղեկցվի մաքսային մարմնին՝ սահմանված սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերից մեկի ներկայացմամբ (այսուհետ՝ համապատասխանության մասին փաստաթղթեր):

Համապատասխանության մասին այդպիսի փաստաթղթերին են վերաբերում՝

համապատասխանության սերտիֆիկատը եւ այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են Մաքսային միության այն անդամ պետության (այսուհետ՝ Կողմ) օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքը ձեւակերպվում է մաքսային ընթացակարգերով,

համապատասխանության հայտարարագիրը, որը նախատեսված է այն Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքը ձեւակերպվում է մաքսային ընթացակարգերով,

Մաքսային միության համապատասխանության սերտիֆիկատը, որը ձեւակերպված է միասնական ձեւով այն ապրանքների համար, որոնք ներառված են Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի միասնական ցանկում՝ (այսուհետ՝ Միասնական ցանկ):

3. Մաքսային մարմիններին համապատասխանության մասին փաստաթղթերի եւ (կամ) նման փաստաթղթերի մասին տեղեկությունների տրամադրումն իրականացվում է հետեւյալ մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու համար՝

ա) «ներքին սպառման համար բացթողում»՝ բացառությամբ այն ապրանքների, որոնք ներմուծվում են՝

որպես հետազոտություններ եւ փորձարկումներ իրականացնելու համար փորձանմուշներ եւ նմուշներ՝ պայմանով, որ մաքսային մարմին ներկայացվի այն հավատարմագրված սերտիֆիկացման մարմնի (հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի)) հետ պայմանագրի պատճենները, որը գտնվում է այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվելու է ապրանքների մաքսային հայտարարագրումը, կամ նման հավատարմագրված սերտիֆիկացման մարմնի (հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի)) նամակները, որոնցով հաստատվում են նման նպատակների համար անհրաժեշտ ներմուծվող ապրանքների քանակը (քաշ եւ ծավալ)։

որպես Մաքսային միության մաքսային տարածք նախկինում ներմուծված պատրաստի արտադրանքի սպասարկման եւ վերանորոգման համար

պահեստամասեր, որոնց նկատմամբ հավաստված է պարտադիր պայմաններին համապատասխանությունը՝ նշված պատրաստի արտադրանքի համապատասխանության մասին փաստաթղթերի պատճենները մաքսային մարմիններ ներկայացնելու պայմանով,

որպես կոմպլեկտավորող ապրանքներ կամ արտադրանքի համար հումք, որը բաց է թողնվում այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվում է դրանց մաքսային հայտարարագրումը.

օտարերկրյա պետությունների եւ միջազգային միջկառավարական կազմակերպությունների ներկայացուցչությունների հասցեով՝ բացառապես դրանք ներմուծող անձանց կողմից դրանց սպառման (օգտագործման) մասին պատճառաբանված դիմումը մաքսային մարմին ներկայացնելու պայմանով.

որպես մարդասիրական օգնություն կամ տեխնիկական օգնություն.

որպես ապրանքներ, որոնք նախատեսված են տարերային աղետների եւ այլ արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ վերացման համար.

բ) «Ժամանակավոր ներմուծում»՝ բացառությամբ հետեւյալի ժամանակավոր ներմուծման՝

կոնտեյներներ, փաթեթվածքներ, ընդկալներ.

ապրանքներ, որոնք նախատեսված են ցուցահանդեսներում, տոնավաճառներում եւ միջազգային հանդիպումներում ցուցադրելու համար, ինչպես նաեւ օժանդակ սարքավորումներ եւ նյութեր, որոնք նախատեսված են ապրանքների նման ցուցադրման ժամանակ օգտագործվելու կամ ցուցահանդեսներում, տոնավաճառներում եւ միջազգային հանդիպումներում օգտագործվելու համար.

ապրանքների նմուշներ, որոնք նախատեսված են բացառապես նման տիպի ապրանքի պատվեր ստանալու նպատակով եւ պիտանի չեն այլ նպատակներով օգտագործվելու համար, ինչն ապահովվում է դրանց վրա չջնջվող դրոշմավորում, պատռվածքներ կատարելու, անցքեր բացելու կամ որեւէ այլ ձեւով վնաս հասցնելու միջոցով.

ապրանքներ, որոնք նախատեսված են փորձարկումներ, ստուգումներ, փորձեր եւ հատկությունների ու բնութագրերի ցուցադրում անցկացնելու նպատակով.

գովազդային տպագիր արտադրանք.

սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են արտիստներին, թատերական խմբերին եւ նվագախմբերին (ներկայացումների ընթացքում օգտագործվող առարկաներ, երաժշտական գործիքներ, դեկորացիաներ եւ կոստյումներ), եթե նման ապրանքները ներմուծվում են օտարերկրյա անձի կողմից եւ օգտագործվում նրա կողմից Մաքսային միության մաքսային տարածքում.

